

Մելգոնեան աշխարհ...
Ծննդավայրն ես հոգւոյս

Ներածական

ՄԿՀ յաճախեցի 2000-2005թ. շրջանաւարտ ըլլալով տարի մը վերջ (2006) Ամերիքըն Ագատնիէն: Հետեւեալ յօդուածը խոկումներու փունջ մըն է ՄԿՀ հարցին շուրջ եւ նոյնաժամանակ մտածումներ «Նոր Օր»ի 11 Յունիս թիւին մէջ լոյս տեսած յօդուածի մը նկատմամբ, որ կը կրէ «ՀԲԸ Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութիւն. Ճշմարտութեան Սիրոյն» վերնագիրը:

Արդէն չորս տարի անցած է այն օրէն որ Մելգոնեանի դռները վերջնականապէս փակուեցան ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութեան որոշումով, ձգելով այս մեծաշուք եւ ազգօգուտ դպրոցը, կմախքակերպ վիճակի մը մէջ: Դպրոց մը, որուն փակին մէջ, հայ երիտասարդներ բարեկամութիւններ կը հաստատէին, տանիք կը խաղային, ընկերներու, հերթապահներու եւ ուսուցիչներու հետ կը խօսակցէին պատմական նոճիներու պուրակին մօտ ճեմելով, կը խնդային, կը յուզուէին, կ'երազէին, ուրախ ու ցաւոտ պահեր կ'ապրէին. եւ այս անուշ պահերէն, խօսակցութիւններէն, թանկարժէք բարեկամութիւններէն եւ բոլոր անկրկնելի փորձառութիւններէն, այս երիտասարդները, որոնցմէ շատերը ննջեցեալ, ուրիշները ընտանիք կազմած իսկ կրտսերներն ալ յարաբերաբար նոր մեկնած Մելգոնեանէն, դարձան մարդ ու հայ:

Կը յիշեմ երբ դպրոցի «Հայեացք» թերթի խմբագրատունը մտնելով կը լսէի Մեսչեանի յատկանշական ձայնը եւ երաժշտութիւնը եւ իր կարօտով լեցուն խօսքերը: Կը յիշեմ մեր հայերէնի ուսուցչուհիին խանդավառութիւնը երբ կը պատմէր մեր բանաստեղծներուն եւ իրենց ստեղծագործութիւններուն մասին: Մանաւանդ կը յիշեմ մեր հանդիսասրահը՝ Մելգոնեանի սիրտը, որ կը խճողուէր տասնեակ աշակերտներով ու կիպրահայերով եւ կարծես թէ երազային հեքիաթի մը աշխարհին մէջ կը փոխադրուէինք երբ ունկնդրելով ու դիտելով, կ'ըմբռնէինք երգերը ու նուագները, պարերը եւ մի քանի անգամ ձանձրացուցիչ երկարատեւ խօսքերը:

Մենք Մելգոնեանի մէջ թէեւ դասարաններէն ներս սորվեցանք հայերէն լեզուի եւ պատմութեան մասին, սակայն աւելին՝ մենք այդ հայկականութիւնը, հայոց մշակոյթի հարստութիւնը՝ զգացինք ու ապրեցանք: Որովհետեւ սէրը ազգի մը հանդէպ նախ եւ առաջ կը ծնի հոգւոյն մէջ եւ յետոյ կ'անցնի մտքի վերլուծումներուն: Իսկ Մելգոնեանը այն հազուագիւտ վայրերէն մէկն էր որ կարելիութիւնը ունէր իր յատուկ էութեամբ, ներշնչել հայ ուսանող-ուսանողուհիներուն այս կարեւորագոյն զգացումները եւ մտածումները:

Ուրեմն այո՛: Մելգոնեանի վերաբացման հարցը չ'ընդգրկէր միայն տրամաբանական այլ զգացական պատճառներ եւս: Տրամաբանական պատճառներու բաղադրամասը նայելէ առաջ, պիտի ուզէի սկզբնական երկու նշումներ կատարել վերոյիշեալ յօդուածին նկատմամբ:

Յօդուածին մէջ մելանին մեծ մասը թափուած է ՄԿՀ հակիրճ պատմականը ընելով. այն պատմականին վրայ յենուելով՝ հեղինակը հասած է իմ կարծիքով սխալ եզրակացութեան մը: Արտօնեցէք բացատրեմ:

Հոն կ'ըսուի թէ Մելգոնեանի փակման հարցը սկսաւ գոյութիւն ունենալ 1967թ. երբ Յունաստանի մէջ զինուորական յեղաշրջումը տեղի ունեցաւ: Այս կամ այն պատճառներով վերջնական վճիռը չի հաստատուեցաւ եւ ՄԿՀ-ի փակման հարցը ՀԲԸՄիութեան չզբաղեցուց մինչեւ 1974՝ Թուրքիոյ զօրքերու ներխուժումէն ետք Կիպրոսի հողին վրայ: Անգամ մը եւս որոշումը չկայացաւ. եւ նախավերջին պարագան որ նոր մտածումներու մղեց ՀԲԸՄիութիւնը, 1980-ական թուականներուն ընթացքին էր, երբ թուրք լրագրողներ լուրեր տարածեցին թէ ՄԿՀ հողին վրայ կը մարզուին ASALA-ի ահաբեկիչներ: Ի վերջոյ, ՀԲԸՄ վճիռը հաստատեց ՄԿՀ փակումը 2005թ. իբր՝ «իր առաքելութիւնը դադրած է կատարելէ» պատճառաբանութեամբ:

Այս պատմականը ընելու ընթացքին կը մէջբերուի նաեւ աշակերտութեան թիւին հարցը (որը կը նկատուի հիմնական խնդիրներէն մին), ըսելով թէ այս վերջին քսան տարիներուն ընթացքին յայտնի պատճառներու եւ եղելութիւններու առ ի հետեւանք, աշակերտութեան թիւը զգալիօրէն նուազեցաւ չբարձրանալով դարձեալ նախորդ տարեշրջաններու աշակերտութեան թիւի աստիճաններուն:

Շատ պարզ վերլուծում մը ընելով այս գրուածքներուն, ուել մէկը կրնայ անդրադարձնալ թէ սխալմունք եւ շփոթութիւն ներարեալ են այս կարծիքներուն մէջ:

Սիրելի ընթերցողներ, տիկիներ ու պարոններ: Պէտք է հասկնանք թէ 2005-ի Մելգոնեանը վստահաբար չբակուեցաւ 1967-ի իրադարձութիւններէն, կամ 1974-ի թուրքերու ներխուժումէն, ոչ ալ ASALA-ի ամնչուող հարցէն: Այսօրուայ Մելգոնեանի փակումը կապուած չի կրնար ըլլալ ուել մէկ հաւանական կերպով 30-40 տարի առաջ տեղի ունեցած դէպքերուն հետ: Իսկ այն պարագային վերաբերեալ որ «նուագած աշակերտութեան թիւ» կը կոչուի, հարկ է նշել այդ Մելգոնեանական իրականութիւնը, թէ ՄԿՀ-ն իր 80-ամեայ կենցաղին ամենէն մեծ մասը, հիւրասիրած է միջին հաշուով 200-250 աշակերտ տարեկան: Ամէն պարագայի, ՄԿՀ իր առաքելութեան միշտ հասած է աշակերտներու նոյնանման թիւերով: Ուրեմն կարելի չէ այս իրողութիւնը համարել խոչընդոտ ՄԿՀ առաքելութեան ամբողջացումին եւ կատարելագործման համար եւ աւելին՝ շարժառիթ ՀԲԸՄ-ի որոշումին՝ դպրոցը փակելու: Բայց եւ այնպէս ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութիւնը հիմնական նկատեց այս (արդեօ՞ք գոյութիւն ունեցող) հարցը:

Շարունակելով, յօդուածին մէջ կ'ըսուի թէ միւս կարելորդ պատճառը որով Բարեգործականի Կ.Վ.-ը որոշեց դպրոցը փակել Մարտ 2004-ին, այն է թէ ՄԿՀ-ի բուն առաքելութիւնը՝ այսինքն բարձր մակարդակի հայակերտումը դադրած է կատարուել վերջին 20 տարիներու ընթացքին:

Պաշտպանելու համար այս կարծիքը, յօդուածագիրը օգնութեան կը դիմէ երկու կիսաստ իրականութիւններու.- Առաջինը՝ ՄԿՀ-ի տկարութիւնը վերջին 20 տարիներու ընթացքին հայթայթել հայ գաղութները հայագէտներով, գործօն անդամներով ու դէկավարներով իսկ երկրորդը՝ ՄԿՀ-ի ձեւափոխումը երկրորդական հասարակ վարժարանի մը, ուր բարձրաստիճան հայակերտումի փոխարէն, աշակերտները հայերէն գրել կարդալ կը սորվէին (այսպէս ըսած է վերջին Տնօրէնուհին): Բայց շեշտեմ անգամ մը եւս.- կիսաստ իրականութիւններ են:

Առաջին հերթին, ՄԿՀ-ի վերջին 20 տարիներու հաշուեյարդարը ցոյց կու տայ թէ արդիւնքները այդպէս չեն, ինչպէս կը ներկայացնէ յօդուածագիրը: Մելգոնեանի ծոցին մէջ հասակ առին եւ կազմուեցան կարող եւ գործունեայ անհատներ եւ հայեր որոնք օգտագործեցին իրենց տրուած շնորհները եւ կը

շարունակեն մինչեւ այսօր, տիրացած ըլլալով շատ կարելոր դիրքերու հայ գաղութներէն ներս, կամ ալ անշուշտ աշխատելով այն դիրքերէն հեռու բազմապիսի ձեւերով:

Այսուհանդերձ պիտի համաձայնիմ թէ չենք կրնար բաղդատել յարաբերաբար կրտսեր եւ երէց Մելգոնեանցիներուն: Իրօք, եթէ համեմատութեան ենթարկենք 40-ական 50-ական թուականներու շրջանաւարտները եւ 80-ական 90-ական թուականներու շրջանաւարտները, կը նկատենք թէ վերջին երկու տասնամեակներու շրջանաւարտները կը ցուցաբերեն նուազած գործունէութիւն (նուազած չի նշանակել քիչ): Ժամանակներու բերումով, ինքնաբերաբար նոր սերունդները հետզհետէ կը ձգտին դէպի համաշխարհայնացում, իսկ ազգային մշակոյթի տեւական վերարտադրումը չի հետեւիր զուգահեռ կերպով այս նոր ուղիին: Տարիները պիտի անցնին եւ այս իրականութիւնը ալ աւելի զգալի պիտի ըլլայ իսկ ՀԲԸՄ-ը կարող պիտի չըլլայ նոյնիսկ մասամբ կասեցնել զայն, ՄԿՀ-ը փակելով եւ անոր փոխարէն Մելգոնեան համալիր մը հիմնելով: Բայց մէկ կողմ ձգենք Մելգոնեան համալիրի ծրագիրը եւ խուզարկենք համառօտ կերպով երկրորդ կիսատ իրականութիւնը որ նշեցինք, թէ Մելգոնեանը հասարակ երկրորդական վարժարանի մը վերածուած է որովհետեւ բաւական աշակերտներ Արեւելեան Եւրոպայէն գալով, լոկ գրել կարդալ կը սորվէին: Սակայն բոլորիս ծանօթ է որ Ցեղասպանութենէն ալ ազատած որբեր որոնցմէ շատերը թրքախօս էին, Մելգոնեան եկան եւ հոն հայերէն գրել կարդալ սորվեցան: Եւ անշուշտ անոնցմէ շատերը ապագային դարձան ուսուցիչներ, մտաւորականներ եւ նուիրեալ ազգային գործիչներ:

Մելգոնեանը 1990-ական թուականներու ընթացքին, Սովետական Միութեան տապալումէն ետք, ընդունեց աշակերտներ Արեւելեան Եւրոպայէն որոնցմէ շատերը հայեցի դաստիարակութիւն չէին ստացած: ՄԿՀ-ը առաքելութեան անգամ մը եւս հասաւ, որովհետեւ այդ աշակերտներուն տուաւ հայեցի դաստիարակութիւն եւ կրթութիւն եւ անոնցմէ շատեր այսօր հայերէն գրել կարդալ սորվելէն զատ, հայկական ոգիով ներշնչուած իրենց հերթին կը փոխանցեն եւ պիտի փոխանցեն զայն իրենց յաջորդներուն ուր որ ալ գտնուին: Այսպէս փաստելով, որ Մելգոնեանցին այն ինչ որ կը ստանայ Մելգոնեանէն զայն կը վերադարձնէ աւելիով յաջորդ սերունդներուն:

Անշուշտ պետք չէ մոռնալ թէ Արեւելեան Եւրոպայէն աշակերտներու թիւը 20-25% էր միջին հաշուով ընդհանուր աշակերտութեան թիւին վրայ: Ուրեմն ամէն պարագայի պետք չէ մոռացկութեան մատնուի մնացեալ 75% -ը որք բաղկացած է աշակերտներէ եկած մեզի աւելի «ծանօթ» երկիրներէ: Ուստի աշակերտութեան մեծամասնութիւնը երբ առաջին անգամ Մելզոնեան մուտք գործեց, արդէն հայերէն գրել կարողալ գիտէր եւ պատրաստ էր աւելի որակաւոր մակարդակի մը հասնելու: Յստակ ըլլալու համար, կ'ուզեմ ըսել թէ այսպիսի պատճառաբանութիւններ չեն արդարացներ ՀԲԸՄիութեան որոշումը:

Ուրեմն եթէ Բարեգործականը այսքան տարի կասկածներ ունէր ՄԿՀ-ի նկատմամբ, ինչո՞ւ չի դիմեց անհրաժեշտ քայլերուն, լուծումներուն ու սրբագրութիւններուն բարեփոխելու համար դպրոցի թերի կողմերը: ՀԲԸՄ-ի Կրթական քննիչները ինչո՞ւ չաշխատեցան հասկնալ դպրոցի տկարութիւնները որպէսզի զայն առաջնորդեն դէպի այն ուղղութիւնը որ պիտի ապահովէր Սփիւռքի ամենէն հոյակապ դպրոցի յաւերժութիւնը: Եթէ նոյնիսկ ՀԲԸՄ աշխատեցաւ փոխել այն թերի կողմերը եւ այսքան տարի ետք չի յաջողեցաւ, ո՞վ կրնայ մեզի երաշխաւորել ու վստահեցնել թէ ՀԲԸՄիութեան ապագայի ծրագիրները պիտի ունենան ակնկալուած յաջողութիւնները:

Մելզոնեանը երբեք չի թառամեցաւ սիրելի ընթերցողներ: Միայն յայտնեց թառամութեան ախտանշանները որոնց ինծի կը թուի թէ ոչ միայն պետք եղած կարելորութիւնը եւ ուշադրութիւնը չի տրուեցաւ, այլ օգտագործուեցան ճարպիկօրէն դժբախտ վճիռ մը հաստատելու համար:

Անկասկած Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը հայութեան ամենէն փառաւոր Միութիւնն է: Անգին ընծաներ մատուցեր է հայ ազգին 1906-էն ի վեր: Եթէ Բարեգործականը գոյութիւն չունենար, կասկածելի պիտի ըլլար այսօր «Սփիւռք» բառի գոյութիւնը: Բոլորս ալ ուրեմն նուազագոյնը պետք է երախտապարտ ըլլանք մեր այս մեծ Միութեան:

Սակայն պետք է նաեւ հասկնանք որ ՀԲԸՄ-ը կը կառավարուի մարդ արարածներէ եւ մարդ արարածը ինչպէս բոլորս շատ լաւ գիտենք, անթերի եւ կատարեալ չէ: Կրնայ սխալիլ կրնայ իր սկզբնական նպատակէն շեղիլ՝ առանց ուզելու սխալ որոշումներ առնելով կամ դրդուած բազմազան շահերէ: Եթէ կասկածի չենթարկենք եւ չստուգենք այս կամ այն Կեդրոնական Վարչութեան կատարած այսպիսի վտանգաւոր քայլերը,

կուրորէն հաւատալով թէ միշտ անսխալ ու ազգօգուտ որոշումներ պիտի առնեն, այն ատեն պզտիկ կամ մեծ հաւանականութիւն մը կը ստեղծուի ողբերգական արդիւնքներու որ չէին նախատեսուած:

Այսօր Հայաստանի մէջ, նոր համալիր մը պիտի փոխարինէ Մելգոնեանը, որ ինչպէս կը կարդանք «Յուշարար Միութիւն» պարբերաթերթի Ապրիլ 2008 թիւին մէջ` «ՀԲԸՄ-ի նպատակն է մէկտեղել սփիւռքահայ երիտասարդ ուսանողութիւնը հայրենի հողին վրայ» եւ «մեր նպատակն է որ ուսանողներ տիրանան համարժէք վկայականներու` Հայաստանի մէջ գործող համալսարաններէն»: Իսկ այս նպատակը ինչպէս նաեւ ենթադրեալ հայակերտումը, պիտի փորձեն իրականացնել պատասխանատուները, ընդունելով ուսանողներ եռամսեայ կամ կիսամսեայ դրութեամբ: Այսինքն ուսանողները առաւելագոյնը վեց ամիս պիտի հիւրընկալուին սոյն կրթական համալիրին մէջ:

Չեմ կրնար խուսափիլ հարցնելէ.- Ո՞ր մէկ վայրին մէջ աւելի յաջող հայակերտում կրնայ կատարուիլ: Կիպրոսի Մելգոնեանի՞ մէջ ուր վեց տարիներու ընթացքին աշակերտները կը տողորուէին հայկական ոգիով եւ կ'ամբողջանային իբր մարդ եւ հայ իրենց շնորհուած իւրայատուկ «Մելգոնեանի կեանքէն», կամ Հայաստանի Մելգոնեան Կրթական Համալիրէն ներս որ թէեւ Մայր հողին վրայ պիտի գտնուին երիտասարդները, սակայն իրենց ժամանելուն պէս մի քանի ամիս վերջ պիտի վերադառնան իրենց երկիրները, առանց ապրած ըլլալու բաւարար ժամանակ մը ուրիշ երկիրներէ եկած հայ երիտասարդներու հետ եւ ստացած ըլլալով չնչին հայեցի դաստիարակութիւն մեր գիտցած ՄԿՀ-ին բաղդատմամբ: Այո՛ բաղդատութիւն չկայ: ՄԿՀ-ի փոխարինումը դիւրին չէ, չըսելու համար անկարելի, նկատի առնելով որ հայ գաղութներու ամենէն գործօն անդամներու մեծ մասը բաղկացած է Մելգոնեանցիներէ:

Մելգոնեանը պէտք է վերաբացուի: Որքան աւելի շուտ այդքան աւելի լաւ: Անհրաժեշտ բարեփոխութիւններով պիտի գրաւէ դարձեալ իր արժանի դիրքը սփիւռքի մէջ: Մելգոնեանը այն քիչ դպրոցներէն է որ հայութեան տուաւ նուիրեալ սերունդներ: Քիչ դպրոցներէն է, որուն մասին երբ շրջանաւարտ մը կը պատմէ, ըլլայ ութսուն, ըլլայ յիսուն, ըլլայ քսան տարեկան, անխուսափելիօրէն կը յուզուի յիշելով այդ երանելի օրերը, Սփիւռքի այդ պզտիկ հայրենիքի հողին վրայ որ կը կոչուի Մելգոնեան Կրթական Հաստատութիւն:

Մուշեղ Իշխան իր բանաստեղծություններէն մէկուն մէջ կը գրէ
«Ես Մասիսը չտեսայ »: Կը յուսամ, իրապէս սիրելիներ, շատ կը
յուսամ, որ ապագայի սերունդները պիտի չըսեն «Ես
Մելգոնեանը չտեսայ»:

Արման Մենենտեան
2006ի շրջանաւարտ